

2024

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Կոտայք և Նոր Գյուղ
բնակավայր

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ՝
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ԱՎ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Կոտայք և Նոր Գյուղ բնակավայր

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՎ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ տնօրեն՝

Ա. Քլջյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	5
1.2	Հապավումներ	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	7
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	10
1.5.1	<i>Ներկա վիճակի և նախատեսվող գործունեության բնութագիր</i>	10
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ</i>	15
1.5.3	<i>Ջեռուցում և օդափոխություն</i>	18
1.5.4	<i>Ջրամատակարարում և ջրահեռացում</i>	20
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ	22
2.1	Շինարարության պայմանները	24
2.2	Շինարարության ժամկետները.....	25
2.3	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....	25
2.4	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	27
2.4.1	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</i>	27
2.4.2	<i>Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը</i>	28
2.5	Թափոնների կառավարում	30
2.6	Աղմուկ և թրթռում:.....	31
3.	ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԶՄԱՊԱՏՈՒՄ	32
3.1	Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ.....	33
4.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	34
4.1	Ընդհանուր տեղեկատվություն տարածքի վերաբերյալ. Աշխարհագրական դիրքը... 34	34
4.2	Ջրային ցանց	34
4.3	Երկրաբանական կառուցվածքը:.....	34
4.4	Մեյսմա-տեկտոնական բնութագիրը:.....	34
4.5	Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը.....	34
4.6	Կլիմայական պայմանները	38
4.7	Օդային ավազան	39
4.8	Ջրային ռեսուրսներ	39
4.9	Հողածածկ	40
4.10	Կենսաբազմազանություն	41
4.10.1	Բուսական աշխարհ	41
4.10.2	Կենդանական աշխարհ	42
4.6	Պատմամշակութային հուշարձանների ցանկ	42
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆԿԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	50

5.6	Ռիսկերի գնահատում	50
5.7	Արտանետումների աղբյուրները	50
5.8	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	51
5.8.1	<i>Մթնոլորտային օդ</i>	51
5.8.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	51
5.8.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	52
5.8.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	53
5.8.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ</i>	53
5.8.6	<i>Աղմուկ և թրթռում</i>	54
5.8.7	<i>Թափոնների կառավարում</i>	54
5.8.8	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i>	55
5.8.9	<i>Էներգախնայողության միջոցառումներ</i>	55
6	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	56
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	57
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	60
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	65
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	66

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող`	«ԱՎ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն`	ՀՀ ք. Երևան Կոմիտաս Պ. 60/2
Նախատեսվող գործունեության հասցեն`	ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Կոտայք և Նոր Գյուղ բնակավայր
Հեռախոս`	+37499994222

1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Սույն հաշվետվությունը մշակված է ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Կոտայք և Նոր Գյուղ բնակավայր բնակավայրում 500 աշակերտական տեղով կրթահամալիրի կառուցման համար:

Օրագրի նպատակն է Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում առաջնահերթ համարվող դպրոցների ուժեղացումը կամ նորի կառուցումը: Դպրոցներն ամրացնելու կամ նորը կառուցելու պարագայում, որպես ծրագրի վերջնական արդյունք կապահովվի սեյսմակայուն դպրոցների շենքերի բարելավված տեսակարար կշիռը:

Օրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Օրագրի իրականացման արդյունքում կբարելավվի սեյսմիկ անվտանգությունը և սեյսմիկ տեսակետից կմեծանա անվտանգ դպրոցական շենքերի ծածկույթը: Արդյունքում կունենանք.

- հակասեյսմիկ ուժեղացված և վերանորոգված դպրոցական շենքեր,

- բարելավված սեյսմիկ անվտանգության պլանավորում և կառավարման կարողություններ,

- կառավարության ծրագրի ուժեղացված կառավարում, իրականացում և մոնիտորինգ:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա

ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Կոտայք բնակավայրում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Կոտայք և Նոր Գյուղ բնակավայրերում նախատեսվող կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Մահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023) – Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա

ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրության փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121 (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003),

պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999թ.),

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (2000թ.)

ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի Ա 781-Ն որոշում

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի 71-Ն որոշում

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում

ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում

«ՀՀ ջրային օրենսգիրքը» ենդունված 2002 թվականի հունիսի 4-ին, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող

շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի և նախատեսվող գործունեության բնութագիր

Կառուցվող դպրոցը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Կոտայք և Նոր Գյուղ բնակավայրերում:

Հողատարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կոտայք և Նոր Գյուղ բնակավայրում՝ ծովի մակարդակից մոտ 1436 մ բարձրության վրա: Աբովյան քաղաքից հեռու է մոտ 3 կմ դեպի հարավ-արևմուտք: Քննարկվող տարածքի ամենաբարձր և ամենցածր նիշերի տարբերությունը կազմում է մոտ 1մ:

Նոր դպրոցի համար հատկացված տարածքը կառուցապատված չէ:

Նախագիծի իրականացնելիս հաշվի են առնվել նաև համայնքի բնակիչների և վարչական ղեկավարների շահերը և առաջարկները բարեկարգման աշխատանքների և այլ բաղադրիչների վերաբերյալ հաշվի առնելով որ հենց իրենք են լինելու տվյալ նախագծի շահառուները:

Հողատարածքի բնութագիր

- Կադաստրային ծածկագիրը՝ 07-038-0042-0010
- Մակերեսի չափը / հա /՝ 1.5
- Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- Գործառական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման
- Գրանցված իրավունքի տեսակը՝ Սեփականություն

Հայցվող հողատածքի կոորդինատներն են՝

ՍԱՀՄԱՆԻ ԿՈՌՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ		
ՀՈՂԱՏԱՐ ԾՔԻ ՍԱՀՄԱՆԻ ԿԵՏԵՐԸ N	X	Y
1	8471348.5303	4459888.9632
2	8471210.2613	4459957.6314
3	8471260.6722	4460031.6325
4	8471216.7858	4460062.3178
5	8471228.1170	4460061.9379
6	8471266.1857	4460055.1986
7	8471307.2160	4460031.1174
8	8471309.8925	4460023.5366
9	8471375.5189	4459995.6215
10	8471374.4898	4459993.0429

Հողատարածքի հարևանությամբ են գտնվում՝ անհատական բնակելի տներ, գրադեցված հողամասեր, ճանապարհ՝

- Բնակելի տուն՝ 48մ
- Բնակելի տուն՝ 12-14մ
- Մանկապարտեզ՝ 20մ
- Ազատ հողատարածքներ՝ 20մ

Տարածքում առկա են ծառափային բուսականություն, մասնավորապես 28 հատ ծառ, ըստ գլխավոր հատակագծի: Նոր կրթահամալիրի կառուցման ընթացքում ծառահատումներ չի նախատեսվում:

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են:

Հողամասի սահմանագծով անցնում է գոյություն ունեցող գազմի մատակարարման խողովակ: Խողովակի պահպանման գոտում շինարարական աշխատանքներ չի նախատեսվում:

Հանվող բուսահողի ծավալը կկազմի մոտ 2700մ³: Շինարարական աշխատանքների ընթացքում բուսահողը կպահվի ծածկված վիճակում, այնուհետև կօգտագործվի տարածքի կանաչապատման համար:

Դպրոցը նախատեսված է 500 աշակերտի համար՝ 26 դասարան:

Դպրոցը բաղկացած է 5 մասնաշենքից, որոնք տարանջատված են սեյսմիկ կարաններով:

1-ին մասնաշենքը եռահարկ է: Առաջին հարկում տեղակայված են գլխավոր մուտքը, ճաշարանն իր օժանդակ սենյակներով: Երկրորդ հարկում նախատեսված է հանդիսությունների սրահ, որը ելքեր ունի նաև երրորդ հարկում:

2-րդ և 3-րդ մասնաշենքերը եռահարկ են: Մասնաշենքերի առաջին հարկերում տեղակայված են տարրական դասարանների դասասենյակները: Մյուս հարկերում

կազմակերպված են մյուս դասարանների դասասենյակները, բուժկետը, հոգեբանի և լոգոպեդի սենյակները, խաղասենյակը, ննջասենյակը, միջանցքները և ռեկրեացիաները: Բոլոր հարկերում նախատեսված են սանհանգույցներ ըստ համապատասխան նորմերի:

4-րդ մասնաշենքը եռահարկ է: Առաջին հարկում տեղակայված են մարզական գույքի և հանդերձարանների սենյակներ, ինչպես նաև՝ սանհանգույցներ: Երկրորդ հարկում նախատեսված են գրադարան-ընթերցասրահ և նկարչության խմբասենյակ, իսկ երրորդ հարկում՝ ստուդիաներ:

5-րդ մասնաշենքում տեղակայված է դպրոցի մարզադահլիճը:

Դպրոցի հողամասի տարածքում նախատեսված են նաև կաթսայատուն, ջրի մաքրման կայան, մաքուր ջրի ռեզերվուար, ջերմոց, բազոթյա մարզադաշտ:

Ինչպես նաև -1 հարկում նախատեսվում է ապաստարան:

Սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար նախատեսվում են թեքհարթակներ, միջհարկային ամբարձիչ և այլն:

Շինությունների տանիքներին տեղակայվելու է 96.28կՎտ (մոտ 689 քմ)դրվածքային հզորության արևային ֆոտովոլտային համակարգ՝ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր:

- ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ IV-16.01.01-2008 «ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ10-01-2014 «ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ 30-01-2014 «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


- ՀՀՇՆ 30-02-2022 «ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 11-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- ՀՀՇՆ 13.01-2022 «ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 11-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գործող կոմունիկացիաների մոտ կատարվող հողային և շինարարական աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել համաձայն բոլոր նորմատիվ պահանջների:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ TECHNICAL SPECIFICATIONS		ՉԱՓՄԱՆ ՄԻԱԿՈՐ MU	ՔԱՆԱԿ QTY
	Title	MU	QTY
1	ԴՊՐՈՑԻ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ SCHOOL CAPACITY	ԵՐԵՍԱ CHILD	ՄԻՆՉԵՎ 500
2	ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍ TERRITORY TOTAL AREA	Ք.Մ SQ. M	15106.45
3	ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ CONSTRUCTION AREA	Ք.Մ SQ. M	3656.87
4	ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՈԿՈՍԸ CONSTRUCTION PERCENTAGE	%	24,20
5	ԾԵՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ TOTAL BUILDING AREA	Ք.Մ SQ. M	7611.29
6	ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ TOTAL AREA OF EDUCATIONAL COMPLEX	Ք.Մ SQ. M	9926.29
7	ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՄԱԿԵՐԵՍԸ USABLE AREA OF EDUCATIONAL COMPLEX	Ք.Մ SQ. M	5740.59
8	ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾԱԿԱԼ CONSTRUCTION VOLUME	Խ.Մ CU. M	51366.36
9	ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ GREEN AREA	Ք.Մ SQ. M	6490.84
10	ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՏՈԿՈՍԸ GREEN AREA PERCENTAGE	%	42,96
11	ԲԱՑՕԹՅԱ ՄԱՐԶԱԴԱԾՏ OPEN-AIR SPORTS FIELD	Ք.Մ SQ. M	778.59
12	ԶԵՐՄՈՑ Greenhouse	Ք.Մ SQ. M	32
13	ԱՆՋՐԱՆՑԻԿ ՄԱԿԵՐԵՍ WATERPROOF SURFACE	Ք.Մ SQ. M	4946.03
14	ԲԱՑՕԹՅԱ ՄԱՐԶԱՀՐԱՊԱՐԱԿ OPEN AIR STADIUM	Ք.Մ SQ. M	300,22
15	ԼՐԱԿԱԶՄ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՑԱՆ Complete transformer substation	Ք.Մ SQ. M	17,64
16	ԶՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՑԱՆ Water cleaning station	Ք.Մ SQ. M	30.35
17	ԿԱԹՍԱՑԱՏՈՒՆ Boiler building	Ք.Մ SQ. M	42.65
18	ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՉՈՐՈՒԹՅՈՒՆ Solar photovoltaic system capacity	ԿՎտ kW	96.28

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻՇ Մ 1:2000
 EXISTING MASTER PLAN SCALE 1:2000



ԵՍՏՆ ԼՍՏԻՎՈՒՄ ԿՈՒՐՄԱՆՈՒ ՋԱԿՆԱՆ
 ԱՐԽԻՏԵԿՏՆԱՆ ՈՒՆԵՑՈՂՈՒՄՆԵՐԱՆԵՐԸ
 ԵՎ ՈՒՆԵՑՈՂՈՒՄ ԳՆԱԿՈՒՄԸ ԱՌԱՅՈՒՄ
 ԿՐԿՐՈՒՄ ԿՐԱՍՏԱՆԻՐԵՐԸ
 © copyright " AY COMPANY" LTD

Kljyan
 archi bureau

" AY COMPANY" LTD
 Address: A. Baghramyan 41,9
 E-mail: info@kljyan.am
 Tel: +374 95 04 99 99
 www.Kljyan.am

Լիցենզիա/
 Licence: ԶՊԼ 18492
 1,96 Արսեն Բլյան
 C. Arch. Arsen Kljyan
 Արտոնագիր
 License: ՃԳՂ-Ա-0280
 Signature: *[Signature]*

ԼԳԿ ԲՈՐԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ
 C. Const. BORIS SARGSYAN
 Արտոնագիր
 License
 Signature:

ՋՃՃԼ Ռուզաննա Տոնյան
 WSDE Ruzanna Tonyan
 Հավատարմագիր
 Certificate Դ-001781
 Signature: *[Signature]*

ԼՃ PA Էրիկա Մկրտչյան
 Erika Mkrtchyan
 Ստուգեց
 Checked Արսեն Բլյան
 Arsen Kljyan
 ԿԳՄՈՃԼ Էլյա Գյուլանյան
 HGVE Elya Gyulanyan

Հավատարմագիր
 Certificate Դ-000703
 Signature:

ԷՃՆ EE Մարի Սոֆյան
 Mary Sofyan
 Հավատարմագիր
 Certificate ՃՄ
 Signature: *[Signature]*

ՃՊՍ Արտագիր Դ AP Project No:
 A 01.01.073.2024
 APA
 A 01.01.073.2024

Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ,
 Ակունք համայնք
 Address: AM, Kotayk province,
 Akunq Municipality

500 ՅԵՂ ՀԶՈՐՈՒԹՅԱՄբ
 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՏԻ
 ԷՍԻԻՉՄՅՈՒՆ ՆԱԽԱԳԻՇ
 ADAPTION PROJECT
 SCETCH OFFER
 OF SCHOOL
 FOR 500 CHILDREN

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ
 ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻՇ
 EXISTING MASTER PLAN


Մասշտաբ / Scale 1:2000 @A3

Էջ 3 / Sheet No
 A 003

Ամսաթիվ / Date 24.01.2025


Շինհրապարակի հատակագիծ

1 ՇՈՒՂԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՇՄԱՆԵՐ**
- ՇՈՒ ՋՐԱՊԱՐԱԿԻ ԳԻՇԵՐԱՑԻՆ ԼՈՒՄԱՐՈՍՎԱԿԱՆ
 - ՇՈՒ ՄԵՇԵՆԱՆԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ
 - ԿԵՏԵ ԵՎ ԳՐԱՍԵՆ ԸՆԴՈՒՍՎԱԿԱՆ ՇՈՒՈՒԹՆԵՐ
 - ՇՈՒ ՋՐԱՊԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
 - ՊՆԵՎՍՈՒՆԻՎԱԶԻՆ ԿՈՌԻԿ ԿՇ-5473
 - ՄՈՒՏԵ-ԵԼԵ ՇՈՒ ՋՐԱՊԱՐԱԿ
 - ՇՈՒ ՄՐԻԻ ԿՈՒՏԱԿԱՆ ԶԱՐԹԱԿԱՆԵՐ
 - ՍԱՐԴԱՑԻՆ ԻՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԴՈՒՍՐԱՆ
 - ՀԱՎԱՐԴՐԵՅԱԿԱՆ ԳՈՒՅԸ
 - ԼՎԱՑՄԱՐԱՆ/ԲԻՈՉՈՒԿԱՐԱՆ
 - ՏԵՐԵԿԱՏԱԿԱՆ ԶՈՒԹՄԱԿ
 - ԻՆԵՐՆ ԼՈՒՈՒԹԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿՈՐՄԱՆ ԶԱՐԹԱԿԱՆԵՐ
 - ԹԵՆԵՆԻ ՓԱԿ ՊԱՅԵՍ

ՇՈՒ ՋՐԱՊԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԺԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՏԵՍԻՆ 1-1



ՏԵՐԵԿԱՏԱԿԱՆ ԶՈՒԹՄԱԿ
ՏԵՍԻՆ 1-1



- ԿԱՌՈՒՑՊՈՒՅՄՈՐ
- ՊԱՆ ԿԱՊԱՆՈՐԷ
- ՇԵՐԽԱԿԱՑԻՆ-ՉԱԿՐԷ
- ՏԵՆԱԿԱԿԱՆ ՉԱԿՐԷ
- ՇՐԱՆ
- ՇՈՒ ԶՈՒՅՆՎՈՐՑՈՒՆ

ՋՐԱՅԱՆՁԱՐԱՆ ԸՍՏ ՇՈՒՂԱՅԱԿԱՆԱԿԱԳԾԻ

- ՇՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿԱԵԼՈՒԹ ՄՈՒՋ ԱՆՋՐԱՏԵՑ Ե ԿԱԶՄԵԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԼԱՆՍԱԳԻԾ (ԱԿԼ)
- ՇՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՂՊԱՆԵԼՈՒ ԱՆՎՏԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՆԱԿԱՑԻ ԿԱՆՈՆԵՐԸ, ԸՍՏ ԹՈՒՎ-2008-Ի ԴՈՐՑՁԵՐԻՆԻ:
- ՇՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ԸՍՏ ԼՇԿԱՑ ԸՐԱՑՈՒԹՅԱՑԻՆ ԳՐԱՅԻԿԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:
- ՇՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՂՊԱՆԵԼՈՒ ՇՈՒ ԼՈՒՐՆԵՐԸ, ԿԱՆՈՆԵՐԸ, ԱՍՏՆԱՐԱՐՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ԱՆԵՎ ԼԱՆՍԱԳԻՑԻ ՏԵՆԱԿԱՑԻ ՊԱՅՄԱՆԸ:
- ՇՈՒ ՋՐԱՊԱՐԱԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԿԱ ՂԵՎԱԿԱՐԿԵԼ ՀԱՎԱՐԴՐԵՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԵՐԻՆ, ՊԱՏԱՆԱՏԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐԻԿ Ե ՇՈՒՐԱՐՈՒԹՅԱՆ ՂԵՎԱԿԱՆԸ ԿԱՄ ԼՈՒՆ ԹՈՒՄԻՒԼՈՂ ԱՆԸ:
- ՇՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԿԱԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇՈՒ ԶՈՒՅՆՎՈՐՑՈՒՆ ԱՍՏԱՆՈՒԹՅ ՂԵՑՈՒ:
- ԱՍՏՈՂՑ ՇՈՒՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԸՐԳԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՑԻ ՊԱՂՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՔԵՐՅԱԼ (ՏԵՍ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ)

Kljyan
archi bureau

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻԿՆԵՐԻ ԿՈՐԻՍՏԻՏԱԿՈՒՄԻՏԵ
ՍՈՒՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԻՍՏԻՏԱԿՈՒՄԻՏԵ
ՊՈՒՆԻՍՏՐԱԿԱՆ ԿՈՐԻՍՏԻՏԱԿՈՒՄԻՏԵ
© Copyright "AV COMPANY" LTD

"AV COMPANY" LTD
Address: A. Bagdasaryan #19
Boulevard, Yerevan
Tel: +374 10 52 10 10
www.Kljyan.am

Լիցենզիա / License: ՇՊԼ 14482

Լ.ԿՍ Արթուր Բլյան
C. Arch. Arsen Kljyan
Լիցենզիա / License: ՇՊԼ Ա.0289

Ստորագրություն / Signature:

Լ.ԿՍ ՔՈՆՍՏՐԱԿՏՈՐ
C. Const. BOBA SAKSERIAN

Լիցենզիա / License: ՇՊԼ Ա.0289

Ստորագրություն / Signature:

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ
ՍՏԸ ՐԱՅԱՏՐԱԳԻԸ

1.5.3 *Ջեռուցում և օդափոխություն*

Դպրոցի շենքի ջեռուցման և օդափոխության նախագծը մշակվել է հիմք ընդունելով – պատվիրատույի առաջադրանքը Ճարտարապետաշինարարական գծագրերը գործող շինարարական նորմերը և կանանները

ՀՀՇՆ IV-12.02.01-04 « Ջեռուցում օդափոխում և օդի լավորակում »

ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր»

ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»

ՀՀՇՆ10-6.02-2006 «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ . ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ»

Ջեռուցման և օդափոխման հաշվարկային ջերմաստիճանը տարվա ցուրտ ժամանակաշրջանի համար 21 °C: Սենյակների ներքին ջերմաստիճանները ընդունված է ըստ վերը նշված նորմերի: Շենքի ջերմամատակարարումը իրականաում է տարածքում կառուցվող կաթսայատնից:

ՋԵՌՈՒՅՈՒՄ

Շենքում նախատեսված է արհեստական շրջանառությամբ ջերմատարի ստորին մատակարարումով փակուղային երկխողովականի ջրային ջեռուցման համակարգ: Մայրուղային մատակարարող և հետադարձ խողովակները տեղադրվում են հատակների վրա և փակվում են լամինացված փայտատաշեղային սալերով կառուցված պատյանով: Դռների մոտով անցնող խողովակները ջերմամեկուսացվում են անց են կացվում պաշտպանիչ պատյանի միջով և տեղադրվում են հատակի տակ : Շենքի ջերմամատակարարումը իրականացվում է տարածքում կառուցվող կաթսայատնից 2 մուտքագծով: Հակասեսմիկ կարանների հատվածներում խողովակների վրա տեղադրվում են կոմպեսատորներ իսկ պատերի անցման տեղերում խողովակները անցնում են մետաղական խողովակից պարկուճների միջով : Ջեռուցման համակարգում տեղադրվում են պողպատե պանելային ջեռուցիչներ, որոնց ջերմատվությունը ընտրված է 75–85°C ջերմաստիճանային էջքի և 20°C սենյակային ջերմաստիճանի համար նախատեսված տվյալներով: Համակարգում տեղադրվում են պոլիպրոպիլենե խողովակներ: Հարմարավետության և էներգախնայողության նպատակով բոլոր ջեռուցման սարքերի մոտ տեղադրվում են թերմոստատիկ և կարգավորող փականներ: Օդի հեռացումը համակարգից կատարվում է բարձր կետերում ջեռուցիչ սարքերի վրա տեղադրվող օդի հեռացման փականներով: Միջհարկային ծածկերի , պատերի միջով անցնող խողովակների անցման տեղերում տեղադրվում են պողպատե խողովակից պատյաններ: Համակարգի բոլոր կամգնակերի վրա տեղադրվում են ձեռքով կառավարվող հաշվեկշռային կափույներ :

ՕԴԱՓՈՒՅՈՒԹՅՈՒՆ

Շենքի դահլիճներում, ճաշարանում նախատեսված է օդափոխման ներածման և արտածման համակարգեր: Օդի ներածումը իրականացվում է օդափոխության ազդեգատներով որոնք համալրված են ներածման օդամուղով, ջրային օդատաքացուցիչով,

Ֆիլտրերով, ավտոմատ կառավարման համակարգով, որը ծրագրավորվում է գործարանում: Օդի արտածումը կատարվում է կանալային օդամուղներով: Օդափոխության համակարգում տեղադրվող բոլոր օդատարները ջերմամեկուսացվում են՝ Դասասենյակներում օդի ներածումը և արտածումը իրականացվում է ջերմության ռեկուպերացիայով օդի ներածման և արտածման ագրեգատներով: Դասասենյակներում ներածվող օդաքանակը հաշված է յուրաքանչյուր աշակերտին 18մ ժամ : Օդափոխության համակարգում տեղադրող սարքավորումները ընտրված են Systemair օդափոխության սարքավորումների արտադրության տվյալներով : Կարելի է տեղադրել նույն պարամետրերի և որակի այլ արտադրության սարքավորումներ:

ՋԵՐՄՈՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ

Ելակետային տվյալներ

1 Շենքի ջերմամատակարարումը իրականացվել է ըստ պատվիրատույի առաջադրանքի: ճարտարապետա շինարարական գծագրերի CHMI II 35-76 և N1 (փոփոխություն) - Կաթսայատան տեղակայումներ

2 Կաթսայատան սարքավորումները ընտրվել են հաշվի առնելով կառուցվող շենքի ջերմային պահանջները:

3 Նախագծված է ջերմամատակարարման փակ համակարգ:

4. Ջերմատարը հանդիսանում է ջուր 80-60«C ջերմաստիճանային էջքով:

5. Հիմնական վառելիքը հանդիսանում է գազը, իսկ տաք ջրամատակարարման համար օգտագործվում է արևային էներգիան

6. Ջրամատակարարումը իրականացվում է ջրամատակարարման ցանցից:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

1 Կաթսայատանը տեղադրվում են 2 հատ =400կՎտ ջերմային հզորությամբ ջրատաքացուցիչ կաթսաներ:

2. Կաթսաները համալրված են ավտոմատ կառավարվող այրիչներով:

3. Տաք ջրամատակարարման համար տեղադրվում են 1000 Լ տարողությամբ 2 ջերմափոխանակիչով ճնշումային ջրատաքացուցիչ բաք ,որի ջերմամատակարարումը իրականացվում է կաթսայից և դպրոցի շենքի տանիքում տեղադրվող արևային ջրատաքացման համակարգից :

4 Համակարգի աշխատանքի համար կաթսայատանը տեղադրվում են ջրի սնուցման և շրջանառության պոմպեր, ջերմատարի ընդարձակման բաքեր, կեղտազտիչ, էլեկտրամագնիսական ֆիլտր:

ԾԽԱԳԱՋԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄ

1. Կաթսաները ունեն ցածր այրողինամիկական դիմադրություն ուստի ծխագազերի քարշը բնական է:

2. Վառելիքի այրման համար օդը այրիչները վերցնում են կաթսայատան սրահից: Օդը մուտք է գործում սրահ դռան և տատուհանի վրա նախատեսված ճաղաշարերից:

1.5.4 *Ջրամատակարարում և ջրահեռացում*

Կրթահամալիրի շինարարության նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում նախագծի ՋԿ մասում նախատեսվում են հետևյալ համակարգերը

ա. Ներքին խմելու ջրի սառը և տաք ջրամատակարարում

բ. Հակահրդեհային ջրամատակարարում

գ. Կենցաղային կոյուղի

Այս համակարգերը միացվում են արտաքին համապատասխան ցանցերին: Նախագծային լուծումները ընդունված են համաձայն ՇՆԿ 2.04.01-85:

Սանտեխնիկական սարքերը մոնտաժվում են համաձայն ՇՆԿ 3.05.01-85:

ՆԵՐՔԻՆ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՍԱՌԸ և ՏԱՔ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Համակարգը de90(Pe) խողովակով, միացվում է արտաքին ջրագծին, որի վրա նախատեսվում է նոր ջրաչափական հոր: Ջուրը նախատեսվող խողովակաշարերի միջոցով բաշխվում է սանիտարական սարքավորումներին և հրդեհային ծորակներին: Սառը և տաք ջրի խողովակները նախատեսված են պողպատե ջրագազատար ցինկապատ DN50 (հրդեհային կանգնակներ), de63(Pe) պոլիէթիլեն: Ներքին սառը և տաք ջրամատակարարման ցանցերը նախատեսված են պոլիպրոպիլենե 32-20 տրամագծերի խողովակներից: Համակարգի նորմալ շահագործման համար խողովակաշարերի վրա նախատեսված են կարգավորիչ փականներ: Տաք ջուրը մատակարարվում է տարածքում նախատեսված կաթսայատնից:

ՆԵՐՔԻՆ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ Շենքում նախատեսվում է ներքին հակահրդեհային համակարգ: Վերանորոգվող I, II, III հարկերի միջանցքներով անցկացվում են հրդեհային կանգնակներ, որոնց վրա մոնտաժվում են հրդեհային ծորակներ՝ պլաստիկ պահարաններում: Համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ 40-01.01-2014 նորմաների, աղյուսակ 1; 4 կետի պահանջվող ներքին հրդեհաշիջման ջրի ելքը 2 x 2.5 լ/վրկ : Արտաքին հրդեհաշիջման համար նախատեսվում է հրդեհային հիդրանտի տեղադրում հավաքովի ե/բ կլոր էլեմենտներից կառուցվող հորում:

ՆԵՐՔԻՆ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒԼՂԻ Մասնաշենքի I, II, III հարկերում գոյություն ունեցող առկա սանիտարական սարքավորումները և կոյուղու խողովակները ապամոնտաժվում են: Կոյուղին նախատեսվում է իրականացնել պոլիվինիլքլորիդային de50, de110 խողովակներով:

Կոյուղաջրերը հավաքվում են և ուղղվում տարածքի հարավային հատվածում նախատեսվող Topas տեսակի մաքրման կայան, քանի որ տարածքում բացակայում է

կոյուղագիծ: Մաքրման կայանի անհրաժեշտ մոդելը կհաշվարկվի ըստ աշակերտների և ընդհանուր մարդ հզորությամբ պայմանավորված:

Մաքրավորումը կատարում է եռաստիճան մաքրում՝ մաքրված կեղտաջրերի բնութագրերն են՝ ԹԿՊ20 - 10-20մգ/լ - ի սահմաններում, ԹՔՊ - 70-100մգ/լ -ի սահմաններում, N և NH4 իոնների պարունակությունը 15-20մգ/լ – ի սահմաններում: Մաքրմա կայանից դուրս եկող ջուրը կարող է օգտագործվել կանաչ տարածքների ոռոգման համար:

Նախագծով նախատեսվում է խրամուղու նախապատրաստական շերտ ավազից 10սմ հաստությամբ, ետլիցք ավազով ձեռքով 0.1մ շերտ առ շերտ տոփանումով d+200մմ, և վերջնական ետլիցք տեղի բնահողից:

Բոլոր համակարգերը մոնտաժից հետո ենթակա են հիդրավլիկական փորձարկման՝ համաձայն գործող նորմերի:

- Ոռոգման համակարգ՝

Ոռոգման համակարգը սնվում է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվում է մաքրման սարքավորուման միջոցով մաքրված ջուրը: Ջուրը ջրասույզ պոմպի (Гном 16-16)-ի միջոցով մղվում է ոռոգման համակարգ:

Ավելցուկային ջրերի հեռացման համար նախատեսված է դրենաժային հորատանցք 15.0մ խորությամբ Ø160մմ, որի մեջ տեղադրվում է պոլիէթիլենային խողովակ: Խողովակի վրա անհրաժեշտ է բացել անցքեր Ø20մմ տրամագծով, յուրաքանչյուր 1 գծամետրի վրա, թվով 10 հատ:

- Անձրևաջրերի հեռացման համակարգ

Անձրևաջրերի բակային ցանցը նախատեսված է իրականացնել ինքնահոս՝ DN200-DN300, SN 8 պոլիէթիլենե (PE) ծալքավոր կոյուղու խողովակներով:

Տարածքում նախատեսված անձրևընդունիչների միջոցով ջրերը հավաքվում են և ուղղվում տարածքի հարավային հատվածում նախատեսվող ԴՀ K2 - 16 դիտահոր, որտեղից հեռացվում դեպի ջրահեռացման առու:

1.5.5 Արևային կայան

ՀՀ, Կոտայքի մարզի համայնք Կոտայք Կենտրոնական փողոց 1-ին փակուղի թիվ 2 հողամասում նոր կառուցվող հիմնական դպրոցի կարիքների համար նախատեսվող 96.28 կՎտ դրվածքային հզորության արևային ֆոտովոլտային համակարգի նախագծման համար

1. Տեղանքի հատակագիծիմք են հանդիսացել.

2. Պատվիրատուի պատվերը Նախագծով նախատեսվում է 9628 կՎտ պիկային դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում վերը նշված դպրոցի տանիքին:

Տեղակայման աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության 40* « 16'23" և արևելյան երկայնության 44°39'46, 1400մ բարձր ծովի մակարդակից:

Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է թվով 166 հատ միաբյուրեղային 580 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաղկացած են թվով 13 ՄԲՖՎՎԽ-ից: ՄԲՖՎՎԽ-ները միացված են 30 և 60 կՎտ անվանական ելքային հզորությամբ եռաֆազ ներցանցային փոխակերպիչների համապատասխանաբար 4-ական և 6-ական ԱՀԿՈՒ-ներին: Փոխակերպիչները տեղադրվում են շենքի 1-ին հարկում գտնվող համար 1-13 սենյակում՝ պատին ձգման եղանակով: Հաստատուն հոսանքի մալուխները տանիքից էլ մատակարարման համար նախատեսված հորանով իջեցվելու են 1-13 սենյակ, իսկ սենյակում փակ մալուխատարերով միացվելու են փոխակերպիչներին: ՖՎ վահանակները տեղակայվելու են շենքի հարավ-արևելյան և հարավ-արևմտյան ուղղվածություն ունեցող լանջերին՝ լանջերի ուղղությամբ և շեղվածությամբ կառուցված հենակառուցվածքի վրա՝ ձգման միջոցով: ՖՎ կրող հենակառուցվածքի բոլոր դետալները և տրամատներն էլեկտրոլիզացված ալյումինից են: ՖՎ վահանակներից թվով 57 հատը տեղադրվում են շենքի 1-ին մասնաշենքի տանիքին, իսկ մնացած 109 հատը՝ 2-րդ և 3-րդ մասնաշենքերի տանիքներին: Փոխակերպիչը փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվում է ինքնավար անջատիչ և իմպուլսային գերլարման սահմանափակիչ: ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է BBTxr 5x70 քմ կտրվածքի, տիպի և մակնիշի պղնձե բազմաջիղ մալուխով: Էլեկտրամոնտաժային աշխատանքներն անհրաժեշտ է կատարել է ՏԿ-ի, ՀՀՇՆ 31-03.01-2014 - ի և գործող այլ հրահանգների նորմերի պահանջներով:

2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍԵԽՆՈՒՈՒԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների՝ աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի՝ արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման՝ անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն,

իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

2.1 Շինարարության պայմանները

“Շինարարության կազմակերպում” բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 և ընդգրկում է · աշխատանքների կատարման համար ներկայացվող տեխնիկական տվյալներ,

Բաջնի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀՇՆ I-3.01.01-2008 “Շինարարության կազմակերպում”
- N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում
- ՍՆԻՊ 1.04.03-85* “Շինարարության տնտրության և նախակատարման նորմեր շենքերի և կառույցների շինարարությունում”,
- ՍՆԻՊ III-4-80* “Անվտանգության տեխնիկական շինարարությունում”,
- 12.1.046-85 “Շինարարական հրապարակների լուսավորման նորմաներ”,
- ՀՀՇՆ II-7.01-2011 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք,
- Ինժեներա-երկրաբանական հետազննությունների նյութեր:

Մինչև շինարարական աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կատարել կազմակերպչական, տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ՝

Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,
- գոյություն ունեցող կոմունիկացիաների վերատեղադրում (անհրաժեշտության դեպքում)
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում (անհրաժեշտության դեպքում),
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Հիմնական փուլ

Հիմնական փուլում կատարվելու են հետևյալ աշխատանքները՝

- հիմնական և օժանդակ օբյեկտների կառուցում,

- ներքին և արտաքին կոմունիկացիաների տեղադրում,
- բարեկարգման աշխատանքներ,
- կանաչապատման աշխատանքներ:

2.2 Շինարարության ժամկետները

Շինարարության ժամկետը որոշվել է ըստ հիմնական աշխատանքների ծավալների և դրանց աշխատատարության: Ընդհանուր տևողությունը կազմում է 24 ամիս կամ 624 օրացուցային օր, բանվորների առավելագույն քանակը 44 մարդ, աշխատանքների համատեղման գործակիցը՝ 2,5, բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը՝ 1,55:

2.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ և ՍԱՌՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ ПЕРЕЧЕНЬ ОСНОВНЫХ СТРОИТЕЛЬНЫХ МАШИН, МЕХАНИЗМОВ И ОБОРУДОВАНИЯ				
Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄ НАИМЕНОВАНИЕ	ՍԱԿՍԻՇ МАРКА	ՀԱՏ ՄՏ	ՔԱՆԱԿ КОЛ - ВО
1.	ԲՈՒԼԴՈՋԵՐ БУЛЬДОЗЕР	ԴԶ-43 ДЗ-43	ՀԱՏ ՄՏ	1
2.	ԷՔՍԿԱՎԱՏՈՐ ЭКСКАВАТОР	ԷՕ-2621Ա ЭО-2621А	ՀԱՏ ՄՏ	1
3.	ԱՇՏԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՈՒԿ БАШЕННЫЙ КРАН	ԿԲ- 403 (ԿԲԿ-160.2) КБ-403 (КБК-160.2)	ՀԱՏ ՄՏ	1
4.	ԱՎՏՈՄԵԹԵՆԱ ԲԵՌՆԱՏԱՐ 10 Տ БОРТОВЫЕ АВТОМОБИЛИ 10 ТН	ԿԱՄԱԶ Камаз	ՀԱՏ ՄՏ	2
5.	ԱՎՏՈՒՆՔՆԱԹԱՓ 3,5 Տ АВТОСАМОСВАЛЫ	ԿԱՄԱԶ Камаз	ՀԱՏ ՄՏ	2
6.	ԲԵՏՈՆԱՆՍՈՒՆԻՉ АВТОБЕТОНОРАСТВОРОВОЗ	ԱԱ - Օ403Ա АС - Օ403А	ՀԱՏ ՄՏ	1
7.	ԱՎՏՈՐԵՏՈՆԱՇԱՂԱՆՍԱՐ АВТОБЕТОНОСМЕСИТЕЛЬ	ԱԲ - 69 СБ - 69	ՀԱՏ ՄՏ	1
8.	ԲԵՏՈՆԱՊՈՍՊ БЕТОНОНАСОС	Ա - 296 С - 296	ՀԱՏ ՄՏ	1
10.	ԵՈՒՎՑՈՂ ԱԳՐԵԳԱՏ СВАРОЧНЫЙ АГРЕГАТ	ՏՏՅ - 34	ՀԱՏ ՄՏ	2
11.	ԵՈՒՎՑՈՂ ԱԳՐԵԳԱՏ ГАЗОСВАРОЧНЫЙ АГРЕГАТ	ՄՈՎ - 1.2 МРВ - 1.2	ՀԱՏ ՄՏ	2
12.	ՓԱՅԼԻԿՈՆԱՅԻՆ ՄԵՔԵՆԱ СВЕРИЛЬНЫЕ МАШИНЫ	ԻԷ - 1808 ИЭ - 1808	ՀԱՏ ՄՏ	2
13.	ԹՐԹՈՒՉ ԱՍՐԱՅՎՈՂ ВИБРАТОРЫ ПРИКРЕПЛЯЕМЫЕ	Ա - 821 С - 821	ՀԱՏ ՄՏ	4
14.	ԹՐԹՈՒՉ ՍԱՎԵՐԵՍԱՅԻՆ ВИБРАТОРЫ ПОВЕРХНОСТНЫЕ	ԻՎ - 2 ИВ - 2	ՀԱՏ ՄՏ	4
15.	ԹՐԹՈՒՉ ԽՈՐՔԱՅԻՆ ВИБРАТОРЫ ГЛУБИННЫЕ	Ա - 697 С - 697	ՀԱՏ ՄՏ	4
16.	ԹՐԹՈՒՉ ԽՈՐՔԱՅԻՆ ВИБРАТОРЫ ГЛУБИННЫЕ	Ա - 801 С - 801	ՀԱՏ ՄՏ	4
17.	ՆԵՐՎԱՅՐԻՉ КРАСКОПУЛЬТ	Ա - 536 Ա С - 536 А	ՀԱՏ ՄՏ	2
19.	ՕՂԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ВОЗДУХОНАГРЕВАТЕЛЬ	ՈՒՎ - 100 УСВ - 100	ՀԱՏ ՄՏ	2

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքների իրականացման համար առաջարկվում է HOWO էքսկավատորը, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Հողային աշխատանքներ՝

Հողաբուսաշերտի հանույթ և պահպանում 2700մ³

Հողագրունտի հանույթ՝ 26113 մ³

Հողագրունտի հետլիծք՝ 7800 մ³

Ավելացած 18313մ³ հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից օրենքով սահմանված վայր /տեղեկանքը կցված է Հավելվածներ բաժնում/:

Հետլիծքի համար նախատեսված հողային զանգվածը կպահպանվի շինհրապարակում փոշենստեցման համար պարբերաբար կիրականացվի ջրցան:

2.4.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Դպրոցի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma. i} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 44 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 624 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 44 \times 0.025) \times 624 = 716,3 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.148 \text{ մ}^3/\text{օր:}$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 12190 մ²,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 450

$$U_1 = 12190 \times 0.0015 \times 450 = 8228,25 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 18,28 \text{ մ}^3/\text{օր}$$

c) Ամիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_2 = S_2 \times K_2 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – լվացվող ավտոմեքենաների քանակը, 10 մ²,

K_1 – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ³,

T – ժամանակահատվածը օրերով, 300

$U_2 = 10 \times 0.14 \times 300 = 420$ մ³/շին. ժամ. կամ 1.4 մ³/օր

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 9364,55 մ³/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել ըստ համայնքի կողմից տրված տեխնիկական պայմանի /կցված Հավելվածներ բաժնում/

Խմելու որակի ջուրը կմատակարարվի տարաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեզում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռագվի որպես շինադր:

2.4.2 Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .

ա/ կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը;

բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը;

գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը; շինարարական կոնստրուկցիաների, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության, բնապահպանական և հրդեհային անվտանգության պահանջներ

- Մինչև աշխատանքների մեկնարկը պետք է կատարված լինեն տվյալ նախագծով նախատեսված անվտանգության միջոցառումները , որոնց ավարտը պետք է ձևակերպված լինի համապատասխան ակտով:
- Մարդկանց գտնվելու համար վտանգավոր գոտիները պետք է ցանկապատվեն, ունենան վտանգի մասին նախազգուշացնող ցուցանակներ:
- Օրվա մութ ժամանակահատվածում շինարարական հրապարակը և աշխատատեղերը պետք է լուսավորված լինեն ըստ ГОСТ 12.1.046-85.

Լուսավորվածությունը պետք է լինի համաչափ, առանց կուրացնող էֆֆեկտի: Չլուսավորված տեղամասերում աշխատանքի իրականացումը չի թույլատրվում:

- Աշխատանքների տեղամասերը և աշխատատեղերը պետք է ապահովված լինեն ընկերային և անհատական պաշտպանության անհրաժեշտ միջոցներով, հրդեհամարման առաջնային միջոցներով, կապի, ազդանշանման և աշխատանքի անվտանգությունն ապահովող այլ միջոցներով՝ համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի և համաձայնագրորի:
- Արգելվում է թողնել կախված, անկայուն, կոնստրուկցիաներ կամ դրանց մասեր:
- Էլեկտրական գործիքների հետ աշխատանքը թույլատրվում է 18-ից բարձր տարիքի անձանց: Էլեկտրաֆիկացված բոլոր գործիքները պետք է գրանցված լինեն հատուկ մատյանում և ունենան հաշվարկային համար: Կիրառելուց առաջ ստուգվում է գործիքի սարքին վիճակը՝ լարերի և բռնիչի մեկուսացումը, աշխատանքային մասի վիճակը, պարապ— ընթացքում աշխատանքը և այլն: Էլեկտրական լարերի պահպանման գոտում բոլոր էլեկտրաֆիկացված գործիքները պարտադիր հողանցվում են:
- Բանվորները պետք է ապահովված լինեն արտահագուստով, հատուկ կոշիկներով և անհատական պաշտպանության միջոցներով:
- Փոշու առաջացումից խուսափելու կամ առաջացման ժամանակ այն մարելու համար շինարարական աղբը պետք է թրջել ջրով:

- Բեռնակալիչ հարմարանքները և տարան (վերամբարձ կռունկով տեղափոխելու դեպքում) պետք է փորձարկված լինեն անվանական բեռնամբարձությունը կրկնակի անգամ գերազանցող բեռով:
- Աշխատանքի գոտում պետք է ունենալ հակահրդեհային միջոցներ ` 200 մ2 մակերեսին - 1 կոմպլեկտ հաշվարկով:
- Շինարարական աղբը պետք է ժամանակին հեռացվի , արգելվում է աղբի այրումը շինարարական հրապարակում:
- Արգելվում է դիզելային վառելիքի դատարկումը գետնի վրա:

2.5 Թափոնների կառավարում

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները`

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, ամբողջ շինարարության համար
1.	Շինարարական աղբ	IV	9120060101004	650 մ ³
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	120մ ³
3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չադտոտված հող	V	31401100 08 99 5	18313մ ³
4.	Սև մետաղի ջարդոն	IV	35131100 01 00 4	5 մ ³
	Գունավոր մետաղների ջարդոն	V	35310101 01 99 5	2 մ ³
5.	Յուղերով ադտոտված ավազ	III	31402303 04 03 3	6 մ ³
6.	Եռակցման խարամ	IV	31404800 01 99 4	0.1տ

Շինարարական աղբը ամբողջությամ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Դպրոցի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

2.6 Աղմուկ և թրթռում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

3. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱՀԱՊԱՏՈՒՄ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,

- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,

- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,

- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,






- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Կանաչապատման աշխատանքներն կհամաձայնեցվեն Ակունք համայնքապետարանի հետ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումը իրականացվելու է ցնցուղային եղանակով, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Նախատեսվող ծառատեսակների քանակային և տեսակային կազմ՝

Պայմանը	Ծառի տեսակ	Քանակ	Ծառերի միջեկ հեռավորություն
		հտ	հեռավորություն
		Չափման միավոր Գտ	Չափման միավոր Մետր
	Կաղին	13	8մ
	Լորենի	4	8մ
	Հացենի	19	6մ
	Կուսախաղող հնգատերեկ	Հողամասի պարագծով	-
	Գոյություն ունեցող ծառեր	28	-

3.1 Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ռոռզման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

զազոնների ռոռզում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռռզման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ռոռզվող տարածքի մակերեսն է, զազոնների մակերեսը՝ $S_1 = 6490,84 \text{ մ}^2$,

K – ռոռզման օրական հաճախականությունն է, K = 2

t - ռոռզման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$$W_{u.3} = (0.006 \times 6490,84) \times 2 \times 175 = \underline{\underline{16630,76}} \text{ մ}^3/\text{տարի}$$

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՆ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1 Ընդհանուր տեղեկատվություն տարածքի վերաբերյալ. Աշխարհագրական դիրքը

Հետազոտվող տեղամասը տեղադրված է ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք գյուղի վարչական տարածքում, գյուղի հարավ-արևելյան կողմում, մանկապարտեզի շենքի արևելյան կողմում, Կոտայք և Նոր Գյուղ բնակավայրերի միջանկյալ հատվածում:

Հետազոտվող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 1.5 հա:

4.2 Ջրային ցանց

Ջրային ցանցը տեղամասում քիչ զարգացած է, տարածքի հիմնական ջրային երակ է հանդիսանում Հրազդան գետը և նրա ձախակողմյան վտակ Ակունք գետը, որոնց ռեժիմն ամբողջությամբ կարգավորված է տարատեսակ հիդրոտեխնիկական կառույցներով, ինչպես նաև մանր ջրահոսքերով և ջրանցքներով: Տեղամասի արևելյան կողմում առկա է ջրատար, որը բաց տեսակի է և անցնում է հյուսիս-հարավ ուղղվածությամբ տեղամասի սահմանային հատվածով:

4.3 Երկրաբանական կառուցվածքը:

Շրջանի և տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումները՝ բազալտ, անդեզիտա-բազալտներ, հրաբխային խարամներ, ավազներ և մոխիր, որոնց վերադրված են Չորրորդականի հասակի բերվածքային առաջացումների շերտերով՝ կավային, ավազային և խոշորաբեկորային գրունտներ և տեխնոգեն առաջացումներ՝ լիցքային գրունտ:

Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 15.0 մետր խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են միայն բերվածքային գրունտները:

4.4 Սեյսմա-տեկտոնական բնութագիրը:

Սեյսմա-տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևանյան միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմաակտիվ մարզերից մեկը:

4.5 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները՝

Շերտ թիվ-1 լիցքային գրունտ (հողա-բուսական ծածկույթ) չպատկապնդված, կավավազային կազմի, մանրախճային և ավազային նյութի խառնուրդով մինչև 25%, տեղ-տեղ շինարարական թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.3-1.0 մետր:

Շերտ թիվ-2 ավազակավ, կավավազ բաց դարչնագույն, դեղնավուն երանգով, կարբոնատացած, սպիտակահողային, տարահատիկ և փոշենման ավազային նյութի խառնուրդով, փոշենման ավազների նրբաշերտերով և ոսպնյակներով, խճի, մանրախճի

հազվադեպ մեծաբեկորների պարունակությամբ, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 1.0-2.5 մետր:

Չորրորդականի հասակի էյուվիա առաջացումներ

Շերտ թիվ-3 ավազ միջին, կոպճային, մոխրագույն, մասամբ թույլ դեղնավուն երանգներով, փոշենման ավազի և փոշու պարունակությամբ մինչև 35%, գրունտը փոքր խտության է, խոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 1.0-2.5 մետր:

Չորրորդականի հասակի էյուվիա առաջացումներ

Շերտ թիվ-4 ճալաքարա-կոպճային գրունտ, հազվադեպ գլաքարերով, հրաբխային ապարներից, լավ հղկվածության, ավազային, կավավազային լցանյութով մինչև 30%, տարահատիկ ավազների և կավային գրունտների նրբաշերտերով, ոսպնյակներով, բներով, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.5-2.0 մետր:

Չորրորդականի հասակի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ

5. Հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համա-խըմբերի հետ, պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին, որոնք հորատանցքերով մինչև 15.0 մետր խորությունը չեն բացահայտվել, ըստ հրատարակված գրականության տվյալների հետազոտվող տեղամասում ստորգետնյա ջրերը տեղադրված են 30.0 մետրից խորը, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ մակերեսային ջրերը, ներթափանցելով գրունտային զանգվածների ավելի խորը տեղադրված շերտերի մեջ, կուտակվելով և զետեղվելով հրաբխային առաջացումների պալեոռելիեֆի "փոս ընկած", ճկված, խորդուբորդ մասերում, կարող են առաջացնել "թաքնված" ջրափոսեր, ջրակալված և խոնավացած տեղամասեր (վերնաջրեր): Հորատման աշխատանքների ընթացքում, ճալաքարա-կոպճային գրունտների շերտին հարող մասերում և թիվ հորատանցքում 8.0-9.0 մետր միջակայքերում դիտվել են խիստ խոնավացած տեղամասեր, որոնք հավանաբար ձևավորվել են տեղամասի արևելյան մասով անցնող ջրատարից ներթափանցքող ջրերի հաշվին:

9. Եզրակացություններ

1. Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն տեխնիկական առաջադրանքի: Հետազոտական աշխատանքների ընթացքում, առաջադրված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղագնում, հորատանցքերի հորատում, նախկինում տարբեր գիտա-արտադրական և նախգծա-հետազոտական կազմակերպությունների կողմից, տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում:
2. Հետազոտվող տեղամասը տեղադրված է ՀՀ Կեսայքի մարզի Կոտայք գյուղի վարչական տարածքում, գյուղի հարավ-արևելյան կողմում, մանկապարտեզի շենքի արևելյան կողմում, Կոտայք և Նոր Գյուղ բնակավայրերի միջանկյալ հատվածում:
3. Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը տեղադրված է Կոտայքի հրաբխային սարավանդի սահմաններում, նրա կենտրոնական մասում, Հրազդան գետի ձախակողմյան սարահարթից Հատիս լեռան Էռզլիոնա-հողմնահարման լանջերին անցման գոտում Ակունք գետի աջակողմյան տափարակի սահմաններում: Տեղամասի ռելեֆը հարթավայրային է, մակերեսը հարթ, բացարձակ նիշերի աննշան անկամբ:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1433.0-1434.0 մետրի սահմաններում:

Համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 (Շինարարական կլիմայաբանություն) տեղամասը գտնվում է ՀՀ կլիմայական շրջանացման Չափավոր տաք կլիմայական գոտու մեջ:

4. Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համալիրների հետ, պատկանում են միջլավային և լավասակի ջրերի տարատեսակներին, որոնք հորատանցքերով մինչև 15.0 մետր խորությունը չեն բացահայտվել, ըստ հրատարակված գրականության տվյալների հետազոտվող տեղամասում ստորգետնյա ջրերը տեղադրված են 30.0 մետրից խորը, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ մակերեսային ջրերը, ներթափանցելով գրունտային զանգվածների ավելի խորը տեղադրված շերտերի մեջ, կուտակվելով և զետեղվելով հրաբխային առաջացումների պալեոռելիեֆի "փոս ընկած", ճկված, խորդուբորդ մասերում, կարող են առաջացնել "թաքնված" ջրափուսեր, ջրակալված և խոնավացած տեղամասեր (վերնաջրեր):

5. Հիմնվելով երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի ուսումնասիրության և գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ամփոփման արդյունքերի վրա, հաշվի առնելով գրունտների երկրաբանական տարիքը, ծագումը և տարատեսակները, երկրաբանական հետազոտության 15.0 մետր հաստվածքում առանձնացվել են գրունտների 4 շերտեր՝

«ԵՐԿՐԱԲԱՆ-ՈՒՏԻՔ» ՍՊԸ		24-06	Էջ
Ամսաթիվ	10.2024		14

—	լիցքային գրունտներ	—	շերտ թիվ 1
—	կավային գրունտներ	—	շերտ թիվ 2
—	ավազային գրունտներ	—	շերտ թիվ 3
—	խոշորաբեկորային գրունտներ	—	շերտ թիվ 4

Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ցուցանիշները տրված են սույն եզրակացության 6-րդ բաժնում:

6. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները, փլուզում, սողանք, կարստ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ կառույցի հիմքերի վրա, ներկա պահին բացակայում են: Սակայն անհրաժեշտ է նշել, որ տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող կավավազային գրունտների լցանյութը ցուցաբերում է ենթաաղողամաշման (սլոփոզիա) առանձնահատկություններ:

Հարկ է նշել նաև, որ կավավազային գրունտները բնութագրվում են ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների շատ փոքր ցուցանիշներով: Վերջիններս որպես հիմնատակի գրունտներ: Վերջիններս որպես հիմնատակի գրունտներ կիրառելու դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀՇՆ IV-10.01.01- 2006 «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՏԱԿԵՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ-ի 7-րդ բաժնի (ՆՍՏՈՒՄԱՅԻՆ ԳՐՈՒՆՏՆԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՀԻՄՆԱՏԱԿԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ) համապատասխան կետերով: Կամ "СП 22.13330 «ОСНОВАНИЯ ЗДАНИЙ И СООРУЖЕНИЙ» Глава 6: Особенности проектирования оснований сооружений, возводимых на специфических грунтах, раздел 6.1: Просадочные грунты":

7. Համաձայն ՀՀՇՆ 20-04 շրջանը և հետազոտվող տեղամասը մտնում են II (երկրորդ) սեյսմիկ գոտու մեջ:
8. Հետազոտվող տեղամասը կառուցապատման նպատակով իրացման համար ինժեներա-երկրաբանական տեսակետից ունի բարդ պայմաններ:

Ինժեներ-երկրաբան
Գլխավոր մասնագետ՝



Ն. Ալեքսանյան

«ԵՐԿՐԱԲԱՆ-ՈՒՏԻՔ» ՍՊԸ		24-06	Էջ
Ամսաթիվ	10.2024		15

4.6 Կլիմայական պայմանները

Դիտարկվող շրջանը գտնվում է չոր մերձարևադարձային կլիմայական գոտում: Ուսումնասիրվող շրջանի կլիման արտահայտված ցամաքային է՝ շատ շոգ, չոր ամառ, չափավոր ցուրտ, անհողմ ձնառատ ձմեռ: Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ «Եղվարդ» օդերևութաբանական կայանի տվյալների: Ջերմաստիճանի բացարձակ նվազագույնը – 32.6 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է +38.7 °C: Տարեկան տեղումների քանակը 445մմ: Օդի հարաբերական միջին տարեկան խոնավությունը 61: Տվյալները ներկայացված են համաձայն Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024 նորմատիվային փաստաթղթից

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերև-ութաբ. կայանը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Եղվարդ	-4,9	-2,8	-2,7	9,4	14,4	18,9	22,8	22,8	18,6	11,8	4,8	-1,7	9,7	-32,6	38,7

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 3.2-ում:

Աղյուսակ 3.2 Օդի հարաբերական խոնավությունը, %

Օդերև-ութաբ. կայանը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		Միջին ամսական	Միջին ամսական մ. 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական մ. 15-ին

Տեղումների բնութագիրը ըստ Եղվարդ օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Աղյուսակ 3.3 Մթնոլորտային տեղումներ

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Տեղումների քանակը եղյուներ-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը սպրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների												Տարեկան		
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Եղվարդ	35	36	44	60	64	39	26	13	17	40	35	36	445	186	259
	30	31	42	40	42	29	53	45	35	39	37	28	53		

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 3.4-ում:

Աղյուսակ 3.4 Քամու պարամետրերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ քստ ուղղությունների								Անոթորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Փերակառուցվածքի արագությունը հունիս-օգոստոս ամիսներից	Միջին արագությունները նվազագույնը քստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Փերակառուցվածքի արագությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագությունները ամռանը քստ ուղղությունների հունիսին, մ/վ
		Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Եղվարդ	Հունվար	6	48	11	3	15	6	9	2	40	1,1	ՀսԱրլ	5,7	ՀսԱրլ	1,8
		1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7						
	Ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2,6				
		3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1						
	Հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4,8				
		4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8						
Հոկտեմբեր	5	55	6	3	16	8	6	1	31	1,9					
	2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2							

4.7 Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2023 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2023 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Ծավ բնակավայրը չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ օգտվելով ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³:

4.8 Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Հրազդան գետն է:

Հրագրանք հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակն է: Ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650 կմ² է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքս գետը: Վերին հոսանքում մոտ 20 կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150 մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820 մ բարձրության վրա լցվում Արաքս: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետերը, Գետառը:

Մնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

Հրագրան գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները բերված են ստորև Աղյուսակ 2.7-ում:

Աղյուսակ 2.7. Հրագրան գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները

Գետը	Ծախսը, մ ³ /վ	Տարեկան հոսքը, մլն.մ ³	Հոսքի մոդուլը, լ/վ կմ ²	Հոսքի շերտի բարձրությունը, մ	Հոսքի գործակիցը
Հրագրան	22.6	714	9.78	308	0.57

Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի մոնիթորինգը իրականացվում է ՀՄԿ ՊՈԱԿ -ի կողմից: Համաձայն “Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ 2022թ շրջակա միջավայրի մասին ամփոփ տեղեկագրի տվյալների Հրագրան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով, մանգանով, նատրիումով և բորով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր և անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

4.9 Հողածածկ

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

4.10 Կենսաբազմազանություն

Ակունք համայնքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Ակունք համայնքը գտնվում է Գեղամա բուսաբանաաշխարհագրական ֆլորիստական շրջանում:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

Ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների հիմնական մասը բնորոշ է միջին բարձրության լեռնային, տաք, չափավոր չորային կլիմայով տափաստանային լանդշաֆտային զոնային:

4.10.1 Բուսական աշխարհ

Բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա-տարազգի ներկայացուցիչները: Համաձայն նախկինում կատարված հետազոտությունների, այստեղ՝ անդեզիտա-բազալտային և տուֆա-լավային մայր ապարների վրա տարածված տարավլացված տիպիկ և սովորական սևահողերով տափաստանային տարածքներում կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից, որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել Իժալեզվազգիներից - OPHIOGLOSSUM YULCATUM (իժալեզու հասարակ), նոճազգիներից - JUNICPERUS EXCELSA (զիհի բազմապտուղի), հովանոցազգիներից - OPOPAHAX PERSICUM (ճավշի պարսկական), ցախակեռասազգիներից - SAMBUCUS TIGRANII (թանթրվենի Տիգրանի), ազգաթոփազգիներից - EMPERTRUM HERMAPHRODITUM (ակնաթուփ երկսեռ) Festuca sulkata (շյուղախոտ), Artemisia austriaca Jack. (բարձրավենյակ), Koeleria nitidula Vel. (կելերիա), Thymus-ի տեսակներ (ուրց), Aegilops cylindrical Host. (այծակն), Scabiosa virgata Grossh. (քոսքոսկ), Achilea micranta M.B. (հազարատերևուկ) և այլն:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը: Մասնագետների կարծիքով այսօր Հայաստանում պահպանության կարիք ունի ֆլորայի տեսակների մոտ 50 տոկոսը:

4.10.2 Կենդանական աշխարհ

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մոտ 1600 մ ծովի մակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում են նաև արտագնալ բնակավայրերին (կմախքային սարեր, քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Համաձայն հրատարակված տվյալների, այս լանդշաֆտային զոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտագնալ բնակատեղերում), այդ թվում՝ 28 (20) կաթնասուն, 67 (41)՝ թռչուն, 15 (8)՝ սողուն և 3 (3)՝ երկկենցաղ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crociodura* (սպիտակատամիկ), *Canis lupus* (գայլ), *Vulpes vulpes L.* (աղվես), *Cricetus auratus Nat.* (գերմանամուկ), *Mucrotus arvalis Pall.* (դաշտամուկ), *Perdix perdix L.*(կաքավ), *Grus grus L.* (կռունկ) և այլն:

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների և այլ գծային կառուցվածքների կառուցում, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել: Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության, նախկին ԽՍՀՄ և Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր Գրքերում: Ստորև, աղյուսակում բերված են Կարմիր Գրքերում գրանցված կենդանիների տեսակները ըստ պահպանության կարգավիճակի (1- անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, 2-անհետացող, կրճատվող):

Անմիջապես կառուցապատման ենթակա տարածքում կարմիր գրքյան կենդանիներ և բույսեր չեն հայտնաբերվել:

4.6 Պատմամշակութային հուշարձանների ցանկ

Կոտայքի մարզի Ակունք գյուղի պատմության և մշակութի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 59 հուշարձան (20 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան	հավելյալ նշումներ	պատկեր
Ամրոց	Ք.ա. 2-1	գյուղից 2	—	6.9/1	Հ		Լուսանկար

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
	հազ.	կմ հս-աե					վերբեռնել
Ամրոց	միջնադար	գյուղի հվ-ամ եզրին	—	6.9/2	Հ		Լուսանկար վերբեռնել
Բացօթյա կայանների համալիր	քարի դար	գյուղից 1 կմ հս-ամ, Հատիս լեռան ստորոտին	—	6.9/3	Հ		Լուսանկար վերբեռնել
Բացօթյա կայան «Ակունք-1»	քարի դար		—	6.9/3.1	Հ		Լուսանկար վերբեռնել
Բացօթյա կայան «Ակունք-2»	քարի դար		—	6.9/3.2	Հ		Լուսանկար վերբեռնել
Բացօթյա կայան «Ակունք-3»	քարի դար		—	6.9/3.3	Հ		Լուսանկար վերբեռնել
Բացօթյա կայանների համալիր	քարի դար	գյուղից 1.5 կմ հս-ամ, Մր. Պողոս-Պետրոս համալիրի մոտ	—	6.9/4	Հ		Լուսանկար վերբեռնել
Բացօթյա կայան «Հատիս-1»	քարի դար		—	6.9/4.1	Հ		Լուսանկար վերբեռնել
Բացօթյա կայան «Հատիս-2»	քարի դար		—	6.9/4.2	Հ		Լուսանկար վերբեռնել
Բացօթյա կայան «Հատիս-3»	քարի դար		—	6.9/4.3	Հ		Լուսանկար վերբեռնել
Բացօթյա կայան «Հատիս-4»	քարի դար		—	6.9/4.4	Հ		Լուսանկար վերբեռնել
Բացօթյա կայան «Հատիս-5»	քարի դար		—	6.9/4.5	Հ		Լուսանկար վերբեռնել
Բացօթյա կայան «Հատիս-6»	քարի դար		—	6.9/4.6	Հ		Լուսանկար վերբեռնել

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Բացօթյա կայան «Հատիս-7»	քարի դար		—	6.9/4.7	Հ		Լուսանկար վերբերոնել
Բացօթյա կայան «Հատիս-8»	քարի դար		—	6.9/4.8	Հ		Լուսանկար վերբերոնել
Բացօթյա կայան «Հատիս-9»	քարի դար		—	6.9/4.9	Հ		Լուսանկար վերբերոնել
Բացօթյա կայան «Հատիս-10»	քարի դար		—	6.9/4.1	Հ		Լուսանկար վերբերոնել
Գերեզմանոց	13-16 դդ.	գյուղի հվ-ամ եզրին	—	6.9/5	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	13-14 դդ.		—	6.9/5.1	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	13-14 դդ.		—	6.9/5.2	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	13-14 դդ.		—	6.9/5.3	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	14-15 դդ.		—	6.9/5.4	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	14-15 դդ.		—	6.9/5.5	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	15-16 դդ.		—	6.9/5.6	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	15-16 դդ.		—	6.9/5.7	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	15-16 դդ.		—	6.9/5.8	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	15-16 դդ.		—	6.9/5.9	Հ		Լուսանկար վերբերոնել
Գյուղատեղի	17-19 դդ.	գյուղից 4	—	6.9/6	Հ	«Բարաջուր»	Լուսանկար վերբերոնել

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
		կմ հս, Հատիս լեռան ստորոտին				վայրում	
Խաչքար	17-18 դդ.		—	6.9/6.1	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	17-18 դդ.		—	6.9/6.2	Հ		Լուսանկար վերբերոնել
Գյուղատեղի	10-20 դդ.	գյուղից 6-7 կմ հս	—	6.9/7	Հ	«Դամաջլու» վայրում	Լուսանկար վերբերոնել
Եկեղեցի	10-12 դդ.	գյուղատեղի հվ կողմում	—	6.9/7.1	Հ	պահպանվել են հիմնապատերը	Լուսանկար վերբերոնել
Գերեզմանոց	10-17 դդ.	գյուղատեղի հվ կողմում	—	6.9/7.2	S		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	10 դ.		—	6.9/7.3	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	11 դ.		—	6.9/7.4	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	12-13 դդ.		—	6.9/7.5	Հ		Լուսանկար վերբերոնել
Խաչքար	13 դ.		—	6.9/7.6	Հ		Լուսանկար վերբերոնել
Գյուղատեղի «Հոլիկներ»	17-18 դդ.	գյուղից 5 կմ հս	—	6.9/8	S		Լուսանկար վերբերոնել
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 800 մ աե	—	6.9/9	Հ		Լուսանկար վերբերոնել
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հս-աե, Սբ. Պողոս-Պետրոս համալիրի ճանապարհ	—	6.9/10	Հ		Լուսանկար վերբերոնել

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
		հին					
Եկեղեցի	5, 10-11 դդ.	գյուղի մեջ	—	6.9/11	Հ	Մ. Գալստյանի հողամասում, ավերված	Լուսանկար վերբերել
Եկեղեցի Սբ. Կարապետ	19 դ.	գյուղի մեջ	—	6.9/12	Տ		 Լուսանկար վերբերել
Զանգակատուն	19 դ.		—	6.9/12.1	Տ		Լուսանկար վերբերել
Եկեղեցական համալիր Պողոս-Պետրոս	12-19 դդ.	գյուղից 2 կմ հս-աե	—	6.9/13	Հ		 Լուսանկար վերբերել
Եկեղեցի Սբ. Մարիամ Աստվածածին	13 դ.		—	6.9/13.1	Հ		Լուսանկար վերբերել
Եկեղեցի Սբ. Պետրոս	13 դ.		—	6.9/13.2	Հ		Լուսանկար վերբերել
Եկեղեցի Սբ. Պողոս	12-13 դդ.		—	6.9/13.3	Հ		Լուսանկար վերբերել
Մատուռ Սբ. Ամենափրկիչ	13-14 դդ.		—	6.9/13.4	Հ		 Լուսանկար վերբերել
Մատուռ Սբ. Սարգիս	17 դ.		—	6.9/13.5	Հ		

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
							Լուսանկար վերբերել
Գերեզմանոց	19-20 դդ.		—	6.9/13.6			Լուսանկար վերբերել
Զոհասեղան	Ք.ա. 2-1 հազ.		—	6.9/14	Հ		Լուսանկար վերբերել
Խաչքար	12-13 դդ.	համալիրից 200 մ	—	6.9/15	Հ		Լուսանկար վերբերել
Խաչքար	12-13 դդ.	համալիրից 200 մ	—	6.9/16	Հ		Լուսանկար վերբերել
Խաչքար Մբ. Հովհաննես	15 դ.	գյուղի մեջ, «Բանդի ժամ» նորաշեն մատուռի ամ կողմում	—	6.9/17	Հ	Խ. Գալստյանի հողամասում	Լուսանկար վերբերել
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1969 թ.	գյուղի մեջ	—	6.9/18	Տ	ճարտ.՝ Ֆ. Վաղարշալյան	Լուսանկար վերբերել
Քարայր-կացարան	քարի դար-միջնադար	գյուղից 2 կմ հս-աե, Մբ. Պողոս-Պետրոս համալիրի մոտ	—	6.9/19	Հ		Լուսանկար վերբերել
Քարայր-կացարանների համալիր	քարի դար-միջնադար	գյուղից 6-7 կմ հս, «Դամջու» գյուղատեղիի մոտ	—	6.9/20	Հ		Լուսանկար վերբերել
Քարայր-կացարան	քարի դար-միջնադար		—	6.9/20.1	Հ		Լուսանկար վերբերել
Քարայր-կացարան	քարի դար-միջնադար		—	6.9/20.2	Հ		Լուսանկար վերբերել

Կոտայքի մարզի Նոր Գյուղ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 15 հուշարձան (11 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Ամրոց	Ք.ա. 2-1 հազ., ուշ միջնադար	գյուղից 1 կմ հս-ամ	—	6.49/1	Հ		Լուսանկ արվերբեռնել
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.		—	6.49/1.1	Հ		Լուսանկ արվերբեռնել
Գերեզմանոց	14-17 դդ.	գյուղի հվ-ամ եզրին, ճանապարհից ամ	—	6.49/2	Տ		Լուսանկ արվերբեռնել
Գերեզմանոց	19 դ.	գյուղի հս եզրին	—	6.49/3	Տ		Լուսանկ արվերբեռնել
Գերեզմանոց	19-20 դդ.	գյուղի աե եզրին	—	6.49/4	Տ		Լուսանկ արվերբեռնել
Խաչքար	15-16 դդ.		—	6.49/4.1	Տ	դրվել է ժամանակակից գերեզմանի վրա	Լուսանկ արվերբեռնել
Գերեզմանոց	17-19 դդ.	գյուղից 1 կմ հվ-ամ	—	6.49/5	Հ		Լուսանկ արվերբեռնել
Դամբարանադաշտ	Ք.ա. 3-2 հազ.	գյուղից 1,5-2 կմ աե	—	6.49/6	Հ		Լուսանկ արվերբեռնել

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Եկեղեցի Սբ. Աստվածածին	1886 թ.	գյուղի կենտրոնում	—	6.49/7	S		Լուսանկար վերբեռնել
Զանգակատուն	19 դ.	կից է եկեղեցուն հվ-ից	—	6.49/7.1	S		Լուսանկար վերբեռնել
Խաչքար	1886 թ.	ազուցված է եկեղեցու ամ մուտքին, որպես ճակատակալ քար	—	6.49/7.2	S		Լուսանկար վերբեռնել
Ժայռապատկերներ		Հրազդանի կիրճի ձախ ափին, ջրամբարի մոտ	—	6.49/8	Հ		Լուսանկար վերբեռնել
Հուշակոթող Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1978 թ.	գյուղի սկզբնամասում	—	6.49/9	S		Լուսանկար վերբեռնել
Քարայր-կացարանների համալիր	քարի դար, միջնադար	Քաղաքաշտպանության գնդի համալիրի տակ և նրանից աջ՝ Հրազդանի կիրճում	—	6.49/10	Հ		Լուսանկար վերբեռնել
Քարայր-կացարանների համալիր	քարի դար, միջնադար	Հրազդանի կիրճի ձախափին, ջրամբարի մոտ	—	6.49/11	Հ		Լուսանկար վերբեռնել

Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի, շինարարական աշխատանքների ընթացում պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնազիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից կդադարեցնեն աշխատանքները և դրա մասին անհապաղ կհայտնեն լիազորված մարմնին»:

5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

5.6 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

5.7 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

5.8 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

5.8.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.

2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվաղողերը լվանալ.

3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.

4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները.

5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ.

6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.

7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

8) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

9) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ:

5.8.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:

- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

5.8.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
 - Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
 - Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
